ԿԱՐԾԻՔ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ՄԱՐԻԱՄ ԱՐԱՄԻ

«ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՕԼԴԻՆԳՏՈՆԻ ՎԵՊԵՐԸ. ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սիրունյան Մարիամ Արամի ատենախոսությունը նվիրված է Առաջին աշխարհամարտի արտացոլման առանձնահատկություններին Ռիչարդ Օլդինգտոնի ստեղծագործություններում: Ատենախոսը փորձ է անում բացահայտել հեղինակի տեղն ու դերը իր ժամանակաշրջանի գրականության մեջ:

Ըստ ատենախոսի, Ռիչարդ Օլդինգտոնի ստեղծագործությունը որոշ չափով ուսումնասիրված է գրականագիտության մեջ, բայց հետազոտողների ուշադրությունը հիմնականում ուղղված է նրա պոետիկ ժառանգությանը, ոչ թե արձակին: Այսպիսով, աշխատանքի անհրաժեշտությունը ակնհայտ է դառնում համաշխարհային գրականագիտության համար: Մ. Սիրունյանը նշում է, որ հեղինակին նվիրված ռուսալեզու աշխատությունները քանակով գերազանցում են անգլալեզուները, և դա հետաքրքիր ճշմարտություն է: Ցավոք, ատենախոսը չի օգտագործում վերջին երկու տասնամյակում բաց աղբյուրներում հրապարակված ատենախոսությունները և մենագրությունները Ռ. Օլդինգտոնի մասին, որոնց քանակը երկու լեզուներով մոտենում է հարյուրի: Աշխատանքի օգտագործած գրականության ցանկը չի գերազանցում այդ թիվը /այն պարունակում է 94 աղբյուր/, իսկ բուն Օլդինգտոնի ստեղծագործությանը նվիրված ամենաթարմ աշխատությունը հրապարակված է 1970-ականներին:

Ատենախոսությունը բաղկացած է Ներածությունից, երեք գլուխներից ենթագլուխներով, Եզրակացություններից, Օգտագործած գրականության ցանկից: Ներածության մեջ ատենախոսը հիմնավորում է թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ներկայացնում ատենախոսության նպատակներն ու խնդիրները, բացահայտում աշխատանքի մեթոդական բազան, հարցի պատմությունը և թեմային առնչվող գրականությունը:

Առաջին գլխում՝ «Պատերազմի ընկալումը զարգացման ընթացքի մեջ», հեղինակն անդրադառնում է երկու հիմնախնդիրներին՝ պատերազմի ըմբռնումներին Օլդինգտոնի ստեղծագործության մեջ և պատերազմի գեղարվեստականացմանը

«Հերոսի մահը» վեպում: Այս գլխի ենթագլուխները հիմնականում նկարագրողական բնույթ են կրում: Հետաքրքրություն է առաջացնում միայն երկրորդ ենթագլուխը, որտեղ քննվում է «Հերոսի մահը» վեպը Բարբյուսի, Ռեմարկի, Հեմինգուէյի և Ֆիցջերալդի ստեղծագործությունների հետ համեմատությամբ:

Երկրորդ գլուխը նվիրված է բարոյականության խնդիրներին պատերազմի ժամանակաշրջանում: Այն ունի երեք ենթագլուխ՝ «Սեր-էրոսի և կին-տղամարդ փոխհարաբերությունների պրոբլեմը Օլդինգտոնի վեպերում», «Ինքնասպանություն-մահ երկփեղկության օլդինգտոնյան ընկալումը» և «Կնոջ կերպարը պատերազմական և հետպատերազմական ժամանակահատվածում»: Ատենախոսության հեղինակը այս գլխում կենտրոնանում է Օլդինգտոնի ստեղծագործություններում Կնոջ կերպարի ուսումնասիրության վրա, վերհանում է լայն հոգեվերլուծական գաղափարների շերտ, որոնք տարածված էին 20-րդ դարի սկզբում և արտացոլված են գրողի երկերում: Մ. Սիրունյանը մատնանշում է, որ «պատերազմի սարսափի բովում անհատը բախվում է ֆիզիկական և հոգևոր վտանգների <...> հետ, հետպատերազմյան մարդը դեմ հանդիման կանգնում է կյանքի անիմաստության, համակերպման անհրաժեշտության, կյանքի շարունակման շարժառիթի բացակայության խնդիրների առջև» /Սեղմագիր, էջ 11/: Ատենախոսը կենտրոնանում է հերոսների տառապանքների, նրանց երազանքների ոչնչացման նկարագրության վրա: Այս գլխում համոզիչ են Վ. Վուլֆի և Է.Մ. Ռեմարկի կերպարների հետ համեմատությունները, իսկ Ֆ. Դոստոեվսկու հերոսներին նմանությունը մեզ թվում է ոչ հիմնավորված:

Ատենախոսության **երրորդ գլուխը** վերնագրված է «Մարդ-հասարակություն հիմնախնդիրը պատերազմյան և հետպատերազմյան հարացույցում» և պարունակում է երեք բաժին՝ «Սերունդների հակադրությունը», «Անհատը և աշխարհը. Օտարացման դրամա» և «"Կորուսյալ" ու նոր սերունդների բախումը. Նոր հերոսը»: Այս գլխում Մ. Սիրունյանի ուշադրության կենտրոնում են Ռ. Օլդինգտոնի գրեթե բոլոր 1930-ականներում լույս տեսած արձակ ստեղծագործությունները: Ատենախոսը պնդում է, որ սերունդների հակադրականությունն են արտացոլում հիմնականում տասնամյանի սկզբում գրված վեպերը, որոնք են՝ «Հերոսի մահը» /1929/, «Բոլոր մարդիկ թշնամիներ են» /1933/, «Իրական դրախտ» /1937/, «Գնդապետի աղջիկը» /1931/, «Կանայք պետք է աշխատեն» /1934/: Իսկ նոր հասարակության ու

քաղաքակրթության ստեղծման ծրագիր առաջարկվում է տասնամյակի վերջին տարիներին հրատարակված երկերում, որոնցից է «Մերժված հյուրը» /1939/, որի հերոսը «հեռանում է պայքարի ասպարեզից ու սոցիալական բախումներից իր սեփական՝ դժվարությամբ ձեռքբերված երջանկության մեկուսի աշխարհ» /Սեղմագիր, էջ 15/:

Վերջաբանում ի մի են բերվում հետազոտության արդյունքները: Նյութի նմանօրինակ լայն ընդգրկմամբ և առաջադրված հիմնահարցերի բազմաձևությամբ հանդերձ, ատենախոսը կարողացել է իր գիտական աշխատության մեջ որոշ չափով համոզիչ լուծումներ տալ: Ատենախոսությունը համապատասխանում է վերնագրին, բայց ցանկալի կլիներ, որ դրանում քննարկվեյին ավելի գրականագիտական, քան սոցիոլոգիական կամ փիլիսոփայական խնդիրներ: Հրատարակված հոդվածները հիմնականում ընդգրկում են հետազոտության արդյունքները, սեղմագրի բովանդակությունը ևս արտացոլում է ատենախոսության դրույթները:

Ընդհանուր առմամբ՝ Սիրունյան Մարիամ Արամի ատենախոսությունը բավական համալիր նյութ ամփոփող հետազոտություն է: Այն կարող է օգտագործվել Բրիտանական գրականությանը նվիրված դասախոսություններում, Ռիչարդ Օլդինգտոնի ստեղծագործության և համաշխարհային գրականության հետ նրա առնչության խնդիրներին նվիրված դասընթացներում:

Ակնհայտ է, որ հեղինակը կատարել է ծավալուն աշխատանք, բայցևայնպես, կցանկանայինք նշել որոշ անհարթություններ.

1. Ցանկալի կլիներ, որ ատենախոսը, Ներածության մեջ առաջին անգամ ներկայացնելուց Ռ. Օլդինգտոնի ստեղծագործությունները, տալ դրանց անգլերեն տարբերակները:

2. Ատենախոսության 3-րդ խնդրի վերաբերյալ կցանկանայինք նշել, որ կեցության կերպն ու հասարակության մեջ առկա հիմնախնդիրները բանասիրական գիտության ուսումնասիրության առարկա չեն, բանասիրությունը հետազոտում է դրանց արտացոլման միջոցները գեղարվեստական գրականության մեջ:

3. Ատենախոսության մեջ ցավալիորեն հանդիպում են մտքերի և գաղափարների կրկնություններ: Օրինակ՝ Ներածության մեջ արտահայտված գաղափարները կրկնվում են ատենախոսության 16 և 25 էջերում: Խորհուրդ

կտայինք նաև հատուկ ուշադրություն դարձնել հղումների ձևակերպմանը, ընտրել որևէ մեկ ոճ հղումների համար:

4. Առաջին գլխի առաջին ենթագլխում առաջադրված գրողի ստեղծագործական ուղու նկարագրությունը կարելի էր հակիրճ ներկայացնել Ներածությունում: Մեր կարծիքով, այս բաժինն ավելորդ է:

5. Կառաջարկեինք, որ խմբագրման ժամանակ ատենախոսը լիներ ավելի ուշադիր՝ 2-րդ գլխի ենթագլուխների կարգը խախտված է:

6. Կցանկանայինք նաև, որ գլուխները պարունակեին ատենախոսի ինքնուրույն եզրահանգումներ:

Այնուամենայնիվ, «Պատերազմը և Օլդինգտոնի վեպերը. բարոյական և սոցիալական ասպեկտներ» ատենախոսությունը հիմնականում համապատասխանում է նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, պարունակում է հետազա ուսումնասիրությունների ներուժ, իսկ ատենախոսության հեղինակ Մարիամ Արամի Սիրունյանը արժանի է իր հայցած՝ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանին:

ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝

Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՄԲԻՈՆԻ

ԴՈՑԵՆՏ, Բ. Գ. Թ. Կ. ԳՈՒԼԱՆՅԱՆ

Կ. Գուլանյանի ստորագրությունը հաստատում եմ.

Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ. ՓԻԼԱՎՋՅԱՆ